ՀՀ կրթության և գիտության նախարարություն

# ՀԱՅԱՍՏԱՆ

**Ընդհանուր տեղեկություններ**

Մայրաքաղաքը՝ Երևան
Բնակչությունը (դե յուրե)՝ 3.268.500 (2011)
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն՝ $ 5.681,60 (2011)
ՀՆԱ-ի միտումները՝ (- 14,1% 2009թ.-ին, + 2,2% 2010թ.-ին, + 4.7% 2011թ.-ին)
Ակտիվության գործակիցը (2011)՝ 63%
Զբաղվածության գործակիցը (2011) 15-75 տարիքային խմբում՝ 51.4% (կանայք՝ 44.4%)
Գործազրկության գործակիցը (2011) 15-75 տարիքային խմբում՝ 18.4%
Սովորողների ցուցանիշը (2010)՝
- բազային կրթություն (SCED 2) 91.6%
- միջնակարգ կրթություն (ISCED 3) 84.4%
- բարձրագույն կրթություն (ISCED 5 and 6)՝ 28%
- նախնական ՄԿՈՒ-ի %-ը ընդհանուր միջնակարգ կրթության (ISCED 3) համեմատությամբ՝ 8.6%
-Կրթության ոլորտում պետական ծախսումները (2010)՝ ՀՆԱ-ի 3,2%-ը

2012թ. **սեպտեմբեր**

Միլենա Կորադինի
Գաբրիելա Պլատոն
Զառա Գրիգորյան
Տաթևիկ Գասպարյան
Ռոբերտ Աբրահամյան
Աիդա Տիգրանյան

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ* ..... 3

ՀԱԿԻՐՃ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ..... 4

1. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՄԿՈՒ) ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ..... 5

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ. ԱՆԴՐԱԴԱՐՁ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ ..... 6

2.1. Ժողովրդագրական միտումները ..... 6
2.2. Միգրացիա ..... 6
2.3. Տնտեսական զարգացում ..... 7
2.4 Աշխատաշուկա ..... 8

3. ԱՐՏԱՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ. ԱՆԴՐԱԴԱՐՁ ՄԿՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԽԹԱՆՄԱՆԸ ..... 9

3.1. Աղքատությունը և մարզային անհամաչափությունը ..... 9
3.2. Աշխատաշուկայի ակտիվ քաղաքականություն և միջոցառումներ ..... 10
3.3. Կրթություն և եկամուտ ..... 10
3.4. Մեծահասակների ուսումնառություն ..... 11

4. ՄԿՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՈՐԱԿԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ..... 12

5. ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 17

Հավելված 1. ԿԳՆ կազմակերպական կառուցվածքը ..... 19

Հավելված 2. Կրթական համակարգը Հայաստանում ..... 20

Հավելված 3. Կառավարման ձևաթուղթ ..... 21

***Հապավումների ցանկ***

| | |
|---|---|
| ԱՀՌԾ-2 | Կայուն զարգացման ծրագիր |
| ԱՎԾ | Ազգային վիճակագրական ծառայություն |
| ԱՄԿ | Աշխատանքի միջազգային կազմակերպություն |
| ԱՄՆ | Ամերիկայի Միացյալ Նահանգներ |
| ԵԿՀ | Եվրոպական կրթական հիմնադրամ |
| ՁԱԿ | Զարգացման ազգային կենտրոն |
| ՁՊԾԳ | «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն |
| ՈԱԱԿ | Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ՀՆԱ | Համախառն ներքին արդյունք |
| ԿԳՆ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն |
| ԿՁՊԾ | Կրթության զարգացման պետական ծրագիր |
| ՏՊՔ | Տարածաշրջանային պետական քոլեջ |
| ՏՀՁԿ | Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն |
| ՄԱՁԾ | Միավորված ազգերի զարգացման ծրագիր |
| ՄԿՈՒ | Մասնագիտական կրթություն և ուսուցում |
| ՄԿՈՒՁԱԽ | ՄԿՈՒ զարգացման ազգային խորհուրդ |
| ՄԿՈՒՁԱԿ | ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն |
| ՄՄՈՒՀ | Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն |
| ԵՄ | Եվրոպական Միություն |
| ՓՄՁ | Փոքր և միջին ձեռնարկատիրություն |
| ՇՄԿՈՒ | Շարունակական մասնագիտական կրթություն և ուսուցում |

## Հակիրճ բովանդակություն

Թուրինի գործընթացի շրջանակում 2010թ. իրականացված նախորդ ուսումնասիրությանը հաջորդած ժամանակաշրջանում, գլոբալ ճգնաժամից հետո առաջին անգամ տնտեսության մեջ գրանցվեց աննշան աճ: Սակայն տնտեսական կառուցվածքում շարունակում է գերակայել ցածր արտադրողականությունը: Հայաստանի աշխատուժի մեծ մասը զբաղված է տնտեսության աշխատատար ոլորտներում, որտեղ ցածր որակավորում է պահանջվում: Բացի անցյալում երկրից արտագաղթի զգալի ալիքներից, Հայաստանն այժմ էլ դիմակայում է ժողովրդագրական մարտահրավերների, որոնք ազդում են կրթության և ուսուցման քաղաքականության վրա՝ հարատև ուսումնառության հեռանկարների համատեքստում: Շատ քիչ բան է վկայում այն մասին, որ մասնագիտական կրթության համակարգը կարողացել է մերձենալ աշխատաշուկայի կարիքներին, սակայն երկրում շարունակվում են ՄԿՈՒ համապատասխանությանը և որակի բարձրացմանն ուղղված բարեփոխումները:

Բնակչության ընդհանուր կրթական մակարդակը շարունակում է բարձր մնալ: Այդուհանդերձ գործազրկության կամ անկայուն զբաղվածության ցուցանիշները դեռևս բարձր են, ընդ որում դրանք ավելի բարձր են բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում՝ ՄԿՈՒ շրջանավարտների համեմատ: Երիտասարդության շրջանում գործազրկության բարձր մակարդակն էլ ավելի է սրում ՄԿՈՒ-ի՝ որպես մրցունակ և որակավորված աշխատուժի ապահովման գործիքի նկատմամբ քաղաքական ուշադրության անհրաժեշտությունը: 2011-2015թթ. կրթության զարգացման պետական ծրագիրը կրթությունը հռչակում է ազգային գերակայություն և ընդունում է ՄԿՈՒ-ի որակի բարելավման ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցման անհրաժեշտությունը: ՄԿՈՒ ընդհանուր տեսլականի համատեքստում քաղաքականությունը նպատակաուղղված էր բարեփոխումների շարունակմանը, թեպետ դրանք հիմնականում ուղղորդվում էին դոնորների կողմից, այն էլ՝ փորձնական հիմունքներով, ընդ որում ընդգրկում էին ՄԿՈՒ իրականացնող ուսումնական հաստատությունների միայն 12%-ը (վերջերս ձևավորված բազմագործառութային տարածաշրջանային պետական քոլեջները): Առաջընթաց է արձանագրվել կրթական նոր չափորոշիչների, համապատասխան ուսումնական պլանների և մոդուլային ծրագրերի մշակման և իրականացման, ինչպես նաև վերջիններիս վերանայման մեթոդաբանության ձևավորման գործում:

Ուսումնական հաստատությունների դասախոսներն ու տնօրենները վերապատրաստվել են նոր ուսումնական պլաններով դասավանդելու և բազմագործառութային քոլեջների կառավարելու նպատակով: Վերապատրաստման դասընթացներն անդրադարձել են նաև մեծահասակների ուսուցման եղանակներին:

Սակայն ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելու և մնացյալ ՄԿՈՒ հաստատությունները ներգրավելու համար առկա ռեսուրսները սահմանափակ են: ՀՀ կառավարության հավանությանն արժանացած «Մասնագիտական կրթության և ուսուցման 2012-2016 թվականների բարեփոխումների ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը», որը բովանդակում է ամբողջ համակարգում բարեփոխումների տարածման ռազմավարությունը, մինչ այսօր առանձնապես ազդեցություն չի ունեցել:

Տեղի է ունեցել ուսումնական հաստատությունների ցանցի ոչ մեծ ռացիոնալացում, ընդ որում կրճատվել է ՄԿՈՒ ուսումնարանների և քոլեջների թիվը: Գրանցվել է նախնական ՄԿՈՒ-ում ընդգրկված սովորողների թվի և այդ հաստատությունների անվճար տեղերի ֆինանսավորման փոքր աճ (որն ուղղված է սահմանափակ ֆինանսական ռեսուրսներ ունեցող սովորողներին): Դասախոս-սովորող հարաբերակցությունը շարունակաբար նվազում է թե՛ նախնական և թե՛ միջին ՄԿՈՒ համակարգում:

ՄԿՈՒ համակարգի իմիջը սկսել է փոխվել՝ սակավ արտոնյալ անձանց համար նախատեսված «երկրորդ հնարավորության» կրթության ընկալումը վերափոխելով կրթության ավելի եվրոպամետ մոդելի ընկալման: Ընտանիքներն ավելի հետաքրքրված են ՄԿՈՒ-ով՝ այն ընկալելով որպես իրենց երեխաների համար լուրջ տարբերակ: Սակայն սա վերաբերում է հիմնականում տարածաշրջանային պետական

քոլեջներին (ՏՊՔ), մինչդեռ ՄԿՈՒ այլ հաստատություններ ընդունվելու գրավչությունը շարունակում է մնալ սահմանափակ ուսումնառության դժվար միջավայրի պատճառով:

Թեև ՄԿՈՒ բարեփոխումները գտնվում են զարգացման տարբեր փուլերում, կառավարումը և ֆինանսական մեխանիզմները մնացել են մեծապես կենտրոնացված: Սոցիալական երկխոսությունը լավագույնս սահմանված է պաշտոնական փաստաթղթերում, իսկ սոցիալական գործընկերների մասնակցությունը նիստերին, խորհրդատվական մարմիններին երաշխավորված է: Որոշակի առաջընթաց է գրանցվել տարածաշրջանային պետական քոլեջների կառավարման մարմիններում սոցիալական գործընկերների (այդ թվում՝ զբաղվածության տեղական կենտրոնների) ներկայացվածության ընդլայնման առումով, իսկ ահա դրանց ինքնավարության ավելացմանն ուղղված գործողությունները դեռևս շատ վաղ փուլում են գտնվում: Կրթությանը ուղղվող բյուջետային հատկացումները ՀՆԱ-ի նկատմամբ գրեթե անփոփոխ են մնացել: Իսկ ՄԿՈՒ-ին հատկացվող ծախսերն այդ բյուջեի 5%-ից էլ պակաս են:

ՄԿՈՒ համակարգի բարեփոխումները կշարունակվեն երկրին բնորոշ համատեքստում, ներառյալ նոր, ուսումնառության արդյունքների վրա հիմնված ուսումնական պլանների վերանայումը, մշակումն ու ներդրումը, ինչպես նաև դասախոսների և տնօրենների հետագա վերապատրաստումները: Առաջիկա տարվա ընթացքում ԵՄ-ի կողմից կկատարվի ՄԿՈՒ համակարգում իրականացվող բարեփոխումների գնահատում, որի նպատակն է բացահայտել այն ոլորտները, որտեղ պետք է կենտրոնացնել պլանավորված ներդրումները (ԵՄ-ի և կառավարության կողմից)՝ ՄԿՈՒ ազդեցությունը մեծացնելու նպատակով:

Առաջիկա տարիների 3 մարտահրավերներն են՝

1) Փորձնական բարեփոխումների հիմնական ուղղությունը ՏՊՔ-ներից տեղափոխել ՄԿՈՒ այլ հաստատություններ:
2) Ուժեղացնել սոցիալական գործընկերների ներգրավումը ՄԿՈՒ գերակայությունների վերաբերյալ երկխոսության և դրանց իրականացման մեջ: Որակավորումների ազգային շրջանակի մշակումը սոցիալական գործընկերներին ներգրավելու կարևոր հնարավորություն է ընձեռում:
3) ՇՄԿՈՒ ռազմավարության մշակումն ամենայն հավանականությամբ կավարտվի 2013թ.: Համապատասխան բոլոր շահագրգիռ կողմերին անհրաժեշտ կլինի ներգրավվել իրականացման հետագա քայլերի որոշման գործընթացում:

## 1. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՄԿՈՒ) ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

2011թ. հունիսին Հայաստանի կառավարությունն ընդունեց Կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիրը (ԿԶՊԾ), որն ընդգծում է, որ «ավելի քան տասը տարվա ընթացքում իրականացված բարեփոխումները հնարավորություն տվեցին ... կայունացնել իրավիճակը և նախադրյալներ ստեղծել զարգացման համար: Այդուհանդերձ, բարեփոխումների շոշափելի ...ձեռքբերումների բացակայության պատճառով ...խաթարված է կրթական հաստատությունների հեղինակությունը, վտանգված է վստահությունը բարեփոխումների ... նկատմամբ»:

Պետական ծրագիրն ընդունում է, որ կրթությունն արժեք է ազգային գերակայությունների թվում և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր տարր: Այն շեշտում է ամբողջ կրթական համակարգի, ներառյալ ՄԿՈՒ-ի որակի բարելավման ուղղությամբ ավելի մեծ ջանքեր գործադրելու անհրաժեշտությունը: ՄԿՈՒ-ի արդիականացումը պետք է համապատասխանի Կոպենհագենի գործընթացի սկզբունքներին և համահունչ լինի աշխատաշուկայի պահանջներին: Կրթության և ՄԿՈՒ-ի ապագա ռազմավարական նպատակները պետք է դիտարկել երկրի ընդհանուր զարգացման նպատակների համատեքստում, այն է՝ (i) ինքնիշխանության ամրապնդում և քաղաքացիական հասարակության զարգացում, (ii) աղքատության հաղթահարում և բարեկեցության ապահովում, (iii) կայուն տնտեսական զարգացման և մրցունակության ապահովում, (iv) ազգային ինքնության պահպանում, (v) միջազգային և տարածաշրջանային գործակցության խթանում:

Հայաստանը սակավ ռեսուրսներով երկիր է և, ինչպես նշված է մինչև 2021թ. Կայուն զարգացման ծրագրում (որը հայտնի է որպես ԱՀՌԾ-2), երկրի հիմնական հարստությունը մարդկային կապիտալն է: Կրթությունը համարվում է զարգացած գիտություն և տեխնոլոգիական կարողություններ ունեցող երկրի իմիջը զարգացնելու «առանցքային մրցակցային առավելությունը և գործիքը»:

«ՄԿՈՒ ոլորտի բարեփոխումների հայեցակարգը և 2012-2016թթ. գործողությունների պլանը (որը մշակվել է ՀՀ ԿԳՆ-ի կողմից և ստացել է ՀՀ կառավարության հավանությունը 2012թ. հուլիսին) ընդգծում է բարեփոխումների հիմնական նվաճումները և ներառում արդյունքների տարածման պլան: Այն շեշտադրում է ՄԿՈՒ համակարգը Եվրոպական մասնագիտական կրթության տարածքին ինտեգրելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ՄԿՈՒ կարևորությունը աշխատաշուկայի և ժամանակակից հասարակության պահանջներին համապատասխան հմտություններ ձեռք բերելու համար մարդկանց ուսուցանելու գործում: Փաստաթղթի մեջ շեշտվում է, որ տնտեսության պահանջներին հարիր կրթական ծրագրերի մշակման համար խիստ կարևորվում է կրթական հաստատությունների և գործարար ոլորտի միջև գործակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծումը:

## 2. ԱՐՏԱՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ. ԱՆԴՐԱԴԱՐՁ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ

### 2.1. **Ժողովրդագրական միտումները**

2011թ. ՀՀ բնակչությունը կազմում էր 3.262.600 մարդ, ընդ որում 51,5%-ը կանայք էին, իսկ 48,5%-ը՝ տղամարդիկ: Թեև սկսած 2008թ. բնակչության տարեկան կայուն աճ է արձանագրվել (0,2%), մինչև 2050թ., ըստ կանխատեսումների, սպասվում է ոչ մեծ նվազում մինչև 3.018.000 մարդ: 2011թ. բնակչության գրեթե 40%-ը կազմում էին 25 տարեկանից ցածր տարիքի մարդիկ: Բնակչության տարիքային կառուցվածքում վերջին հինգ տարիներին եղած միտումը ցույց է տալիս, որ կարճաժամկետ և միջնաժամկետ առումով առկա է երիտասարդ տարիքային խմբերի նվազման և մեծահասակների/աշխատունակ ռեսուրսների (25-64 տարեկան) արագացված ընդլայնման գործընթաց: Երկարաժամկետ կանխատեսումները (մինչև 2050թ.) բացահայտում են բնակչության կառուցվածքի փոփոխություն, ընդ որում աշխատունակ բնակչության (25-64 տարեկան) թվաքանակի նվազում գրեթե 8%-ով և թոշակառու բնակչության մասնաբաժնի ավելացում 8,5%-ով: Սա ազդելու է առհասարակ հասարակության վրա՝ խնամքի տակ գտնվող անձանց տոկոսի, աշխատուժի, առկա հմտությունների, սոցիալական և առողջապահական ծառայությունների մատուցման և այլ առումներով:

2011թ. բնակչության քաղաքային և գյուղական մասնաբաժինները կազմել են համապատասխանաբար 64% և 36%, ընդ որում արձանագրվել է քաղաքային բնակչության շատ փոքր նվազում և գյուղականի աճ:

### 2.2. Միգրացիա

Արտագաղթը երկրում շարունակում է մնալ կարևոր գործընթաց, թեև վերջին տարիներին ավելի ցածր մասնաբաժին ունի: Այն արտահայտվում է երկրում աշխատունակ տարիքի բնակչության ավելացող թվով:

2012թ. օգոստոսին ավարտված՝ «Հմտությունների և միգրացիայի» վերաբերյալ ԵԿՀ ուսումնասիրության (որպես մի քանի երկիր՝ Հայաստան, Վրաստան և Մարոկկո, ընդգրկող ծրագրի մի մաս) շրջանակում անցկացվեց հարցում երկրի մասշտաբով՝ 2600 պոտենցիալ միգրանտների և 1400 վերադարձած միգրանտների ընտրանքի շրջանում: Պոտենցիալ միգրանտներից ստացված պատասխանների որոշ արդյունքներ ընդգծում են, որ նրանց 36%-ը (18-50 տարիքային խումբ) լրջորեն մտածում է աշխատանք գտնելու համար երկրից հեռանալու մասին: Արտագաղթելու ցանկություն ունեցողների 58%-ը տղամարդիկ են: Միգրացիայի երեք հիմնական պատճառները համարվել են գործազրկությունը, ապրելակերպի բարելավման ցանկությունը և կարիերայի հեռանկարի բացակայությունը: Արտագաղթելու հակվածությունն ավելի բարձր է բարձրագույն կրթություն ունեցող տղամարդկանց և կանանց շրջանում, որը հաստատում է, որ ուղեղների արտահոսքը խիստ հրատապ խնդիր է:

Պոտենցիալ միգրանտների մեկնելու հիմնական երկրներն են՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ն և Ֆրանսիան: Վերադարձած միգրանտների հարցման արդյունքները ցույց են տալիս, որ նրանց 87%-ը Ռուսաստանից վերադարձած տղամարդիկ են, որոնց զգալի հատվածը աշխատել է շինարարության, մշակող արդյունաբերության և առևտրի ոլորտներում: Նրանց մեծ մասն աշխատել է ցածր հմտություններ պահանջող և իրենց կրթական մակարդակից ցածր աշխատատեղերում: Հմտությունները կորցնելու ռիսկը մեծանում է՝ կախված կրթական մակարդակից. վերադարձած միգրանտների 42%-ն է կարողացել վերադառնալուց հետո աշխատանք գտնել, մինչդեռ 68%-ը լրջորեն մտածում է նորից արտագաղթելու մասին: Ուսումնասիրության արդյունքները մատնանշում են, որ անհրաժեշտ է մշակել օրինական միգրացիայի համար պայմաններ ստեղծելուն ուղղված հետևողական քաղաքականություն, որն առավելություններ կստեղծի թե՛ ուղարկող և թե՛ ընդունող երկրի համար:

2011թ. ԵՄ-ն և Հայաստանը ստորագրեցին «Շարժունակության շուրջ գործընկերություն» հռչակագիրը, որի նպատակն էր նպաստել օրինական շարժունությանը: Նախատեսված կոնկրետ գործողությունների շարքում պետք է նշել պոտենցիալ միգրանտների համար ՄԿՈՒ-ի ապահովումը՝ համապատասխան աշխատատեղ գտնելու հեռանկարի առումով նրանց հմտությունները զարգացնելու նպատակով: Ավելին, առաջնային գերակայություն է համարվել հմտությունների ու որակավորման ճանաչման համակարգի ստեղծումը:

**2.3. Տնտեսական զարգացում**

2011թ. Հայաստանի միջին եկամուտ ունեցող տնտեսությունը շարունակել է վերականգնվել 2009թ. գրանցված էական անկումից հետո: Տնտեսական աճը 2010թ. 2,1%-ից աստիճանաբար հասավ 4,6%-ի 2011-ին: Արդյունաբերությունը, որի շարժիչ ուժը հիմնականում հանքարդյունաբերությունն էր և ավելի նվազ չափով՝ ագրոարդյունաբերությունը, ապահովեց տնտեսական աճի ավելի քան կեսը: Գյուղատնտեսությունն ապահովեց աճի 8,1%-ը: Սակայն շինարարության ոլորտում շարունակվող անկումը մասամբ փոխհատուցում է այս նվաճումները:

ՀՆԱ-ի հիմնական մասը գոյացել է սպասարկման ոլորտից (2010թ. դրա մասնաբաժինը կազմել է 44,5%), որտեղ գրանցվել է զբաղվածության ամենամեծ մասնաբաժինը (2010թ.՝ 44%): 2010թ. արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է 36%, ընդ որում ունեցել է զբաղվածության ավելի ցածր մակարդակ (2010թ.՝ 17,4%): Սա ցույց է տալիս, որ արդյունաբերության ոլորտն ապահովել է ամենաբարձր արտադրողականությունը բոլոր ոլորտների մեջ: Գյուղատնտեսությունը շարունակում է էական դեր խաղալ՝ ապահովելով ՀՆԱ-ի ավելացված արժեքի մեկ հինգերորդ մասը և զբաղվածության 40%-ը՝ միևնույն ժամանակ ցույց տալով տնտեսության ճյուղերի մեջ ամենացածր արտադրողականությունը:

ՓՄՁ հատվածը կառավարության համար շարունակում է մնալ գերակայություն, քանի որ կարևոր դեր է խաղում տնտեսական զարգացմանը նպաստելու առումով: 2010թ. իրականացված բարեփոխումները ներառում էին գործարար միջավայրի բարելավմանն ուղղված գործողություններ և արդյունաբերական ձեռնարկություններին վարկային միջոցների տրամադրումը՝ նրանց գործարար ծրագրերի հիման վրա: Ըստ Զարգացման ազգային կենտրոնի (ԶԱԿ) հաշվարկների, 2010թ. ՓՄՁ ներդրումը ՀՆԱ-ի մեջ կազմել է 43% (2008-ի 41,7%-ի դիմաց): 2010թ. ՓՄՁ հատվածում զբաղվածությունը փոքր-ինչ աճել է՝ կազմելով ընդհանուր զբաղվածության 42,2%-ը:

Ըստ մրցունակության համաշխարհային համաթվի, Հայաստանը 2012-2013թթ. 142 երկրների մեջ գրավում է 82-րդ տեղը՝ բարելավելով իր դիրքերը անցյալ տարվա համեմատ:

Դրամական փոխանցումները նախորդ տարիների համեմատությամբ աճել են մոտավորապես 20%-ով՝ 2011թ. հասնելով ՀՆԱ-ի 12,1%-ի և նպաստելով ընթացիկ հաշիվների պակասուրդի բարելավմանը 2,6%-ով: Երկրի բոլոր տնային տնտեսությունների մոտ 36%-ը (ներառյալ արտերկրում միգրանտ ունեցող տնային տնտեսությունների ավելի քան 70%-ը) կանոնավոր դրամական փոխանցումներ են ստացել իրենց ապրուստը հոգալու համար:

2.4 **Աշխատաշուկա**

Աշխատաշուկան դանդաղորեն վերականգնվում է, ընդ որում աննշան աճ է գրանցվել ակտիվության գործակցում (2008թ. 59,5%-ի դիմաց 2010թ. կազմել է 61,2%) և զբաղվածության գործակցում (2008թ. 49,8%-ի դիմաց 2010թ. կազմել է 49,6%): Ըստ Վիճակագրական տարեգրքի, 2010թ. պետական հատվածում զբաղվածության (ներառյալ՝ համայնքային զբաղվածության) մասնաբաժինը կազմել է 26,2%, իսկ մասնավոր հատվածում (ներառյալ ՀԿ հատվածը)՝ համապատասխանաբար 73,8%:

Գործազրկությունը շարունակում է մնալ բարձր և վերջին տարիներին շարունակում է աճել (2008-ի 16,6%-ի դիմաց 2011-ին կազմելով 18,4%): Զբաղվածության ցուցանիշների առումով գոյություն ունի սեռային անհամաչափություն. կանանց տվյալներն ավելի բացասական են:

Երիտասարդների (15-24 տարեկան) շրջանում գործազրկությունն ամենաբարձրն է, ընդ որում ավելի քան կրկնակի բարձր է, քան գործազրկության ընդհանուր մակարդակը (Աղյուսակ 1): Վերջին երեք տարիների ընթացքում երիտասարդ տղամարդկանց շրջանում գործազրկության մակարդակը նվազել է մինչև 31,9% (2010թ.), իսկ երիտասարդ կանանց շրջանում այն աճել է՝ հասնելով 48%-ի: Տվյալները ցույց են տալիս, որ երիտասարդները աշխատաշուկա մուտք գործելիս դժվարությունների են հանդիպում, ընդ որում իրադրությունն էլ ավելի խնդրահարույց է երիտասարդ կանանց համար:

**Աղյուսակ** 1. **Գործազրկության մակարդակը երիտասարդության շրջանում** (15-24 **տարեկան**), %

| | 2008 | 2009 | 2010 |
|---|---|---|---|
| Ընդամենը | 36,5 | 40,9 | 38,9 |
| Տղամարդիկ | 32,1 | 36,0 | 31,9 |
| Կանայք | 43,2 | 47,1 | 48,0 |

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

2011թ. ԵԿՀ-ն իրականացրել է ուսումնասիրություն, որի նպատակն էր աշխատաշուկայի վերաբերյալ որակական տեղեկություններ հավաքել գործատուներից, աշխատողներից և ՄԿՈՒ շրջանավարտներից: Հետազոտությունն ընդգրկեց երկու մարզ և երեք ոլորտ (զբոսաշրջություն, շինարարություն, գյուղատնտեսություն): ՄԿՈՒ շրջանավարտներից ստացված պատասխանների արդյունքները շեշտադրում են, որ նրանց զբաղվածությունը կախված է ոչ միայն մարզում առկա տնտեսական կառուցվածքից և աշխատատեղերի առաջարկից (օր.՝ շրջանավարտների 59,1%-ը զբաղված է Երևանի զբոսաշրջության ոլորտում և միայն 21,7%-ն է նույն ոլորտում աշխատանք գտել Տավուշի մարզում):

Կրթական նվաճումների և աշխատանքի հնարավորությունների միջև գոյություն ունի կառուցվածքային անհավասարակշռություն: Աշխատանք փնտրողները իրենց կրթական ոլորտին համապատասխանող աշխատանք գտնելու դժվարությունների են հանդիպել համապատասխան ոլորտում աշխատատեղերի սահմանափակ առաջարկի պատճառով (օր.՝ ներկայացված շրջանավարտների զբաղվածության 87,5%-ը Երևանի շինարարության ոլորտում է, մինչդեռ միայն 21,4%-ն է աշխատանք գտել Տավուշի գյուղատնտեսության ոլորտում): Տավուշում գործազրկության բարձր մասնաբաժինը կապված է առհասարակ առկա թափուր աշխատատեղերի (որը բացատրվում է մարզի տնտեսական զարգացման մակարդակով) և, հատկապես, շրջանավարտների որակավորման հետ կապված թափուր աշխատատեղերի սահմանափակ թվի հետ: Հարցազրույցի ենթարկվածների երկու երրորդը պատասխանել է, որ Երևանի շինարարության ոլորտում ունեն իրենց որակավորմանը համապատասխանող աշխատանք, մեկ երրորդը՝ Տավուշի գյուղատնտեսության ոլորտում և միայն 10%-ից էլ քիչ թվով հարցվողներ՝ Երևանի զբոսաշրջության ոլորտում: Տավուշի մարզի զբոսաշրջության ոլորտում այս համապատասխանությունը հավասար է 100%-ի: Սակայն շրջանավարտների պատասխանները ցույց են տալիս, որ գործազուրկների գրեթե կեսը երբեք ակտիվորեն աշխատանք չի փնտրել (կամ շահագրգռված չի եղել, կամ հիասթափվել է ապարդյուն որոնումներից): Աշխատող շրջանավարտները նշել են, որ իրենք զբաղեցնում են պաշտոններ, որոնք սովորաբար համապատասխանում են որակավորման ավելի ցածր մակարդակի (օր.՝ զբոսաշրջության մենեջերի որակավորում ունեցող շրջանավարտները աշխատում են որպես մատուցողներ, իսկ բարձրագույն լեզվաբանական կրթություն ունեցող շրջանավարտն աշխատում է որպես ընդունարանի աշխատող):

Գործազրկության առումով մարզերի միջև գոյություն ունի անհամաչափություն, ընդ որում՝ ոչ անպայմանորեն կապված մարզի զարգացման մակարդակի հետ: Օրինակ, գործազրկության ամենաբարձր մակարդակը Երևանում (մայրաքաղաքում) է (30,2%՝ 2011-ին), թեև այն ամենազարգացած մարզն է, որն ունի մեկ շնչին ընկնող ամենաբարձր ՀՆԱ-ն, բայց՝ գյուղատնտեսության ոլորտի (ոլորտ, որը կարող է բուֆեր հանդիսանալ գործազրկության դեմ) ամենացածր մակարդակի ակտիվությունը:

Ոչ պաշտոնական զբաղվածության (ինքնազբաղվածություն և չգրանցված զբաղվածություն) մակարդակը շատ բարձր է և կազմում է ամբողջ աշխատունակ բնակչության 59,2%-ը (ԱՄԿ, 2011): Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական ոլորտներում ոչ պաշտոնական զբաղվածության դիտարկումը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության մեջ զբաղվածության 36,5%-ը ոչ պաշտոնական է, իսկ ոչ գյուղատնտեսական ոլորտում ոչ պաշտոնապես աշխատողների թվաքանակը կազմում է ընդհանուրի 19,1%-ը:

Ըստ կրթական մակարդակի գործազրկության կառուցվածքը (Աղյուսակ 2) ցույց է տալիս, որ բարձրագույն կրթություն ունեցող և ՄԿՈՒ որակավորում ունեցող անձինք ունեն գործազրկության համանման մակարդակ (մոտավորապես բոլոր խմբերի միջին արժեքի չափ), բայց առկա է սեռային անհամաչափություն, քանի որ մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ունեցող կանայք ավելի մեծ դժվարությունների են հանդիպում աշխատանք գտնելու հարցում, քան կրթական նույն մակարդակն ունեցող տղամարդիկ: Պետք է նաև հաշվի առնել, որ բարձրագույն կրթություն ունեցողները ավելի հակված են գտնելու ավելի ցածր հմտություններ ունեցողների համար նախատեսված աշխատանքներ:

**Աղյուսակ** 2. **Գործազրկությունը և կրթական մակարդակը** 2010**թ**., (%)

| Կրթական մակարդակը | Ընդամենը | Տղամարդ | Կին | Քաղաքաբնակ | Գյուղաբնակ |
|---|---|---|---|---|---|
| Տարրական և ցածր | 2,1 | 0,1 | 3,9 | 12,3 | 0,1 |
| Հիմնական դպրոց | 17,3 | 20,5 | 11,9 | 36,2 | 5,6 |
| Ավագ դպրոց/վարժարան | 17,4 | 17,3 | 17,5 | 30,7 | 6,0 |
| Միջին մասնագիտական | 17,8 | 12,2 | 26,6 | 26,6 | 5,7 |
| Բարձրագույն (բակալավր և մագիստրոս) | 20,1 | 16,9 | 22,7 | 27,2 | 5,2 |
| Հետբարձրագույն (ասպիրանտուրա և այլն) | 19,5 | 17,9 | 21,0 | 22,3 | 6,9 |
| Ընդամենը | 18,4 | 3,0 | 19,6 | 26,9 | 5,8 |

Աղբյուրը՝ 2010թ. կենսապայմանների հետազոտություն

Ըստ աշխատաշուկայի վերաբերյալ վարչական աղբյուրներից հավաքված տվյալների, գրանցված գործազրկության մակարդակը 2008թ. 6,3%-ի դիմաց 2010թ. կազմել է 7%: 2010թ. գրանցված գործազուրկների 70%-ը կայանք էին, ընդ որում նրանց 11%-ն ապրում է գյուղական վայրերում: Գրանցված գործազուրկների 57,5%-ը 2010թ. ավելի քան մեկ տարի աշխատանք է փնտրել: Մասնավորապես, կանանց շրջանում երկարաժամկետ գործազրկության մասնաբաժինն ավելի բարձր էր (59,5 %), իսկ գյուղական վայրերում գրանցված գործազուրկների 60%-ն այս իրավիճակում է եղել ավելի քան մեկ տարի (2010-ին):

## 3. ԱՐՏԱՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ. ԱՆԴՐԱԴԱՐՁ ՄԿՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԽԹԱՆՄԱՆԸ

### 3.1. Աղքատությունը և մարզային անհամաչափությունը

1999-ից 2008թ. ընկած ժամանակահատվածում աղքատությունը կիսով չափ նվազեց՝ 56%-ից հասնելով 27,6%-ի, դրանով իսկ ավելի քան մեկ միլիոն մարդ դուրս եկավ աղքատությունից: Սակայն միայն երկու տարի անց այդ կրճատման 30%-ը նորից վերականգնվեց: 2010թ. աղքատների թվաքանակն աճեց մինչև 35,8%, ընդ որում 8,2%-ի աճ գրանցվեց գյուղական և քաղաքային վայրերում: Հիմնականում գյուղական բնակչություն և գյուղատնտեսության համար դժվարին պայմաններ ունեցող մարզերում առկա է

աղքատության ավելի բարձր մակարդակ: Առհասարակ, զբաղվածության պակասն ավելացնում է աղքատ կամ ծայրահեղ աղքատ դառնալու ռիսկը (օր.՝ երկու մարզերում՝ Կոտայքում և Շիրակում, առկա գործազրկության ամենաբարձր մակարդակը համապատասխանում է աղքատության ամենաբարձր մակարդակին): Միաժամանակ, գյուղատնտեսական բնամթերային գործունեության և ծառայությունների ոլորտում ներգրավվածները կարող են հայտնվել աղքատության ռիսկի առջև: Գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության մեծ մասը բավականաչափ եկամուտ չի ապահովում՝ անհատներին աղքատության մակարդակից բարձրացնելու համար:

Երկրում տեղի ունեցող ներքին միգրացիան մեծապես նպաստել է անհամաչափությանն ու աղքատությանը՝ ավելացնելով բնակչության թիվը քաղաքներում (մասնավորապես՝ Երևանում)՝ գյուղական վայրերում թողնելով տարեցներին ու առավել խոցելի խմբերին, ներառյալ՝ գործազուրկ կանանց, ովքեր չեն բարելավել իրենց հմտությունները, իսկ երբեմն էլ՝ միայնակ մայրեր են:

Մարզային կամ քաղաքային/գյուղական անհամաչափության հարցը էականորեն կապված է կրթության մատչելիության և որակի հետ: Խնդիրներ կան սահմանափակ մատչելիության և ավելի ցածր որակի առնչությամբ, ընդ որում գյուղական և/կամ ավելի պակաս զարգացած վայրերում ուսումնական գործընթացն ավելի կարճ է տևում: ՄԿՈՒ քոլեջների մեծ մասը չունի ջեռուցման համակարգ (այդպես է եղել վերջին 20 տարիների ընթացքում), իսկ տարվա ամենացուրտ ժամանակաշրջանում դասերը դադարեցվում են:

### 3.2. Աշխատաշուկայի ակտիվ քաղաքականություն և միջոցառումներ

Զբաղվածության խթանումը և աղքատության կրճատումը կարգավորող հիմնական իրավական ակտերը հետևյալներն են. (i) «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանվածության մասին» ՀՀ օրենքը և (ii) Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը: Երկուսն էլ կարգավորում են խոցելի խմբերի համար զբաղվածության խթանմանը վերաբերող հարցեր: Դրանք կարող են ներառել աշխատանք փնտրողներին տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրելը, միջնորդական գործունեությունը, աշխատանքի տեղավորման ծառայությունները, ուսուցումը և վերապատրաստումը: Կարելի է իրականացնել ավելի մեծ թվով հատուկ մշակված ծրագրեր կոնկրետ խմբերի համար և այդ խմբերի հետ (ձեռնարկատիրական գործունեության հիմնում, հաշմանդամների ուսուցում, աշխատանքի վերականգնում և աշխատանքի որոնում, հանրային աշխատանքներ և այլն), որոնք կարող են ներառել գործազուրկ աշխատանք փնտրողներին դրամական օժանդակություն ցուցաբերելու ծրագրեր և գործազրկության նպաստների հատկացում: «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության (ԶՊԾԳ) տրամադրած տեղեկությունները ցույց են տալիս, որ 2007թ. ի վեր գրանցվել է միջոցառումներին ակտիվ մասնակցության 36%-ի աճ, բայց, թեև նշված ժամանակամիջոցում խոցելի խմբերին նպատակաուղղված ուսուցումն ավելացել է 28%-ով, սակայն այն դեռևս կազմում է 2010թ. զբաղվածության խթանմանն ուղղված աշխատանքների միայն 3,4%-ը:

### 3.3. Կրթություն և եկամուտ

Բարձրագույն կրթություն ունեցողներն ավելի քիչ են հակված աղքատ լինելու, իսկ աղքատության մակարդակը բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում գրեթե կիսով չափ (14,7%) պակաս է միջին ցուցանիշից (26,6%): Միջին մասնագիտական կրթություն ունեցողների շրջանում աղքատության մակարդակը ամենամեծ աճն է ունեցել ճգնաժամի ընթացքում (2008-2010թթ.), որը որոշակի պատկերացում է տալիս որակավորված աշխատողների աշխատանքի վերականգնման դժվարությունների մասին: Համեմատած 2008թ. տվյալի հետ, ծայրահեղ աղքատությունն աճել է կրթական բոլոր մակարդակների համար, բացի տարրական և հիմնական կրթություն ունեցողներից (Աղյուսակ 3):

**Աղյուսակ** 3. **Աղքատության մակարդակն՝ ըստ կրթական մակարդակի**, 2008 **և** 2010**թթ**. (16 **տարեկան և բարձր տարիքի բնակչություն**)

| | Աղքատություն | | Ծայրահեղ աղքատություն | |
|---|---|---|---|---|
| | 2008 | 2010 | 2008 | 2010 |
| Տարրական և ցածր | 36,8 | 41,1 | 4,2 | 3,4 |
| Հիմնական դպրոց | 40,1 | 44,9 | 3,3 | 6,0 |
| Ավագ դպրոց/վարժարան | 30,2 | 40,4 | 1,7 | 3,5 |
| Միջին մասնագիտական | 21,9 | 30,8 | 1,0 | 2,0 |
| Բարձրագույն (բակալավր և մագիստրոս) | 14,7 | 18,2 | 0,4 | 0,8 |
| Ընդամենը | 26,6 | 34,3 | 1,6 | 2,9 |

Աղբյուրը՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ԱՎԾ 2011

ՄԱԶԾ-ի հետազոտությունը ցույց է տալիս, որ լավ կրթություն ստացած և բարձր հմտություններ ունեցող աշխատողների եկամուտներն ավելի բարձր են, քան՝ ավելի ցածր կրթություն ստացած աշխատողներինը: Լավ կրթություն ստացած անհատների շրջանում գոյություն ունի գործազրկության ավելի ցածր մակարդակ և ավելի կարճ տևողություն, քան՝ ավելի պակաս կրթվածների շրջանում: Բոլոր կրթական մակարդակներում երիտասարդ կանայք վաստակում են էականորեն ավելի քիչ, քան տղամարդիկ, բայց նաև խելամիտ հատույց են ստանում բարձրագույն կրթության վրա կատարած իրենց ներդրման համար:

Գյուղերի, քաղաքների և մարզերի տնտեսական զարգացման միջև եղած ճեղքվածքն առավել կարևոր սոցիալական մարտահրավերներից առաջինն է, մարտահրավերներ, որոնք ձևավորում են հմտությունների պահանջարկը: Երկրորդը կրթության որակն ու արժեքն են՝ որպես ընդհանուր միջնակարգ և բարձրագույն կրթության մատչելիության միջոցով սոցիալական շարժունության հասնելու լծակ:

### 3.4. Մեծահասակների ուսումնառություն

Համաձայն մասնագիտական ուսուցման վերաբերյալ ԱՎԾ 2010թ. զեկույցի, ուսուցանվել է 16411 աշխատող, ընդ որում ուսուցման ծախսերը հոգացել են գործատուները: Տվյալները վերաբերում են միջին և խոշոր ձեռնարկություններին, ընդ որում ուսուցում անցածների 76%-ը տղամարդիկ էին: Նրանց շուրջ երեք քառորդը (76%) մասնագիտական ուսուցում և վերապատրաստում է անցել արդյունաբերության, ծառայությունների, տրանսպորտի և հաղորդակցությունների ոլորտներում: Ուսուցման գրեթե 74%-ը տրամադրվել է աշխատավայրում, իսկ մնացածը՝ կրթական հաստատություններում: Սա ցույց է տալիս, որ գործատուները ուսուցման հարցում հիմնականում վստահում են սեփական ընկերություններին:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ԶՊԾԳ-ի միջոցով ֆոնդեր է հատկացնում աշխատանք փնտրող կամ բիզնես հիմնելու ցանկություն ունեցող գործազուրկների և հաշմանդամների ուսուցման համար: 2008-ից 2010թ. ընկած ժամանակամիջոցում ավելի քան 4000 մարդ, ներառյալ 252 հաշմանդամներ, ներգրավվել են գործազուրկների համար նախատեսված մասնագիտական ուսուցման մեջ: Ուսուցումից հետո մասնակիցների ավելի քան 50,8%-ը կարողացել է աշխատանք գտնել:

Սակայն մեծահասակների կրթության միասնական համակարգ գոյություն չունի: Նման համակարգի ստեղծումը կպահանջի կառավարության կողմից սահմանված ծրագրերից անցում կատարել մասնավոր և պետական կազմակերպությունների կողմից առաջարկվող ուսուցման լավ կարգավորվող շուկային, որտեղ ուսուցման ծառայություններ կմատուցվեն թե՛ աշխատող և թե՛ գործազուրկ մեծահասակներին: Ընդհանրապես, հաջողված համակարգերը պահանջում են կառավարական մարմինների և մասնավոր հատվածի միջև համակարգման և գործընկերության բարձր մակարդակ, ինչպես նաև՝ ակտիվ մասնակցություն ուսուցման պահանջարկի մասով (բիզնեսներ և անհատներ) ուսուցման քաղաքականության որոշմանը: Մեծահասակների ուսումնառության որակի և համապատասխանության բարելավումը պետք է գերակայություն լինի մի երկրում, որտեղ առաջիկա տարիներին սպասվում են

էական տնտեսական փոփոխություններ և ժողովրդագրական կառուցվածքի որոշակի մարտահրավերներ:

2011թ., հետևելով համանման մարմինների որոշ օրինակների, ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվել է «Ուսուցման ազգային հիմնադրամը»: Ակնկալվում է, որ Հիմնադրամը գործատուների կարիքների հիման վրա կնպաստի ՄԿՈՒ շուկային: 2012թ. ԿԳՆ-ն 44.000 եվրոյին համարժեք գումար է հատկացրել Հիմնադրամը գործարկելու համար (ինչպես սահմանված է ՀՀ կառավարության որոշմամբ): Հստակ չէ, թե Հիմնադրամն ինչպես է աշխատելու ՄԿՈՒ-ի ապահովումն ու մասնակցությունը բարելավելու, ինչպես նաև կայունությունն ապահովելու նպատակով ռեսուրսներ հայթայթելու ուղղությամբ: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդում ներգրավվել են պետական իշխանության մարմիններ և սոցիալական գործընկեր կազմակերպություններ, որոնք դեռևս վերջնական եզրահանգման չեն եկել Հիմնադրամում ներդրումներ անելու և մեծահասակների ուսուցումն իրականացնելու շուրջ:

2010թ. ԿԳՆ-ում ստեղծվեց նոր ստորաբաժանում՝ լրացուցիչ և շարունակական կրթության բաժինը: Սա ցույց է տալիս այն աճող կարևորությունը, որ շարունակական կրթությունն ունի մարդկային ռեսուրսների զարգացման քաղաքականության համատեքստում, որի նպատակն է արտադրողականության և մրցունակության աճը: ՄԿՈՒ ազգային ռազմավարությունը շրջանառվում է տարբեր պետական հաստատությունների, սոցիալական գործընկերների և ՀԿ-ների շրջանում և քննարկվելու է 2012թ. հոկտեմբերին կայանալիք կլոր սեղանին: Ռազմավարությանը կհետևի դրա իրականացման վերաբերյալ օրենսդրության ընդունումը:

## 4. ՄԿՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՈՐԱԿԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Բնակչության ընդհանուր կրթական մակարդակը (Աղյուսակ 4) ցույց է տալիս, որ ՄԿՈՒ մասնաբաժինն ընդհանուրի մեջ համեմատաբար հաստատուն է և կազմում է մոտ 25%: Թույլ դրական տեղաշարժ է նկատվում բարձրագույն կրթության ոլորտում (մինչև 18,6% 2010-ին), որտեղ կանանց մասնակցությունը միջինից բարձր է: Եթե համեմատենք ընդհանուր կրթության հետ, (2010-ին՝ 43,9%), ՄԿՈՒ մասնակցությունը ցածր է, քանի որ այն գրավչության առումով էական փոփոխություններ չի կրել:

**Աղյուսակ** 4. **Կրթական ընդհանուր մակարդակը՝ ըստ սեռերի**, %

| | 2008 | | 2009 | | 2010 | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | Կանայք | Ընդամենը | Կանայք | Ընդամենը | Կանայք |
| Տարրական և ցածր | 3,2 | 3,4 | 2,8 | 2,7 | 2,0 | 2,1 |
| Հիմնական դպրոց | 11,0 | 9,8 | 10,1 | 8,8 | 10,3 | 8,8 |
| Ավագ դպրոց/վարժարան | 42,4 | 40,3 | 43,1 | 41,4 | 43,9 | 41,8 |
| Միջին մասնագիտական | 3,2 | 2,7 | 2,6 | 2,3 | 2,2 | 1,9 |
| Բարձրագույն (բակալավր և մագիստրոս) | 22,9 | 25,9 | 23,1 | 26,2 | 22,9 | 25,9 |
| Տարրական և ցածր | 17,3 | 18,0 | 18,3 | 18,8 | 18,6 | 19,4 |

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (2010)

ՄԿՈՒ համակարգը բնութագրվում է երկու տարբեր ուղեգծերով. (i) նախնական ՄԿՈՒ հաստատություններ, որտեղ Կրթության միջազգային ստանդարտ դասակարգման (ISCED) մակարդակը մինչև 3 է և որոնք նախատեսված են արհեստագործ մասնագետների պատրաստման համար: Այստեղ կարելի է ընդունվել պարտադիր ինը տարվա կամ 12 տարվա միջնակարգ կրթություն ստանալուց հետո, իսկ ուսուցման տևողությունը կարող է լինել 6 ամսից մինչև 3 տարի. (ii) միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ (քոլեջներ), որտեղ ISCED մակարդակը մինչև 4 է, և որոնք նախատեսված են միջին մասնագիտական որակավորման մասնագետների ուսուցման համար: Այստեղ կարելի է ընդունվել պարտադիր հանրակրթական կամ միջնակարգ կրթություն ստանալուց հետո, իսկ

ուսուցման տևողությունը կարող է լինել 2-ից 5 տարի: Երկու ուղեգծերն էլ առաջարկում են մասնագիտական որակավորում (մուտք աշխատաշուկա) և բարձրագույն կրթություն ստանալու հետագա հնարավորություն (տես՝ հավելված 2):

2008-ի համեմատ, նախնական ՄԿՈՒ սովորողների քանակն ավելացել է ավելի քան 28%-ով՝ 2010-ին կազմելով 6.393 հոգի. Կանայք կազմում են այս սովորողների մոտ 25%-ը: Նախնական ՄԿՈՒ–ում սովորողների 90%-ը ստանում է անվճար կրթություն (եթե համեմատենք 2009-ի հետ, 2011-ի դրությամբ այս ցուցանիշն ավելացել է 1,6%-ով): 2008 թվականից նոր սովորողների թիվն ավելացել է 48%-ով, 2010-ին կազմելով 3.119 մարդ, ընդ որում սովորողների 27%-ը կանայք են: Սովորողների և դասախոսների դրույքի հարաբերակցությունը շարունակում է նվազել, 2010-ին հասնելով 6,8-ի:

Միջին ՄԿՈՒ սովորողների ընդհանուր թիվը 2008/9-ից նվազել է մոտ 7%-ով՝ 2010/11 ուսումնական տարում կազմելով 29.575: Այս սովորողների 61%-ը կանայք են: 2010-ին միջին ՄԿՈՒ ընդունվածների թիվը (11.666) մնացել է գրեթե անփոփոխ, իսկ կանանց մասնաբաժինն ընդհանուրի մեջ կազմում է 57%: 2009-2010 ուսումնական տարում պետական ֆինանսավորմամբ ՄԿՈՒ ընդունված սովորողների մասնաբաժինն ընդհանուրի մեջ կազմել է 29,1%, որն ավելի բարձր է, քան բարձրագույն կրթության դեպքում (16%): Սովորողների թվի հարաբերակցությունը ուսուցիչների դրույքին նվազել է և 2010-ին կազմել 7,9: ՄԿՈՒ համակարգից դուրս մնացած սովորողների թվի վերաբերյալ տեղեկություններ չկան:

2011-ին ՄԿՈՒ բարեփոխումներին և աշխատաշուկայում դրանց օգտակարությանը վերաբերող ռազմավարական և իրավական փաստաթղթերի ընդունումն ու հաստատումը նպատակաուղղված է նախնական և միջին ՄԿՈՒ շարունակական արդիականացմանը: Ազգային կրթության և ուսուցման համակարգի որակի բարելավմանն ուղղված առանցքային օրենսդրական գործիք կարելի է համարել Որակավորումների ազգային շրջանակը: Հաստատվել է դրա ներդրման 2012-2013թթ. խիստ հավակնոտ ժամանակացույցը: Ներկայիս կրթական ծրագրերը պետք է վերանայվեն Հայաստանի որակավորումների ազգային շրջանակի մակարդակների բնութագրիչներին համապատասխան, քանի որ որակի այս բնութագրիչներն են ազգային կրթական չափորոշիչների հիմքը:

ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնը շարունակում է իր աշխատանքը կրթական չափորոշիչների վերանայման, ինչպես նաև նոր զբաղմունքների բնութագրերին համապատասխան նոր չափորոշիչների մշակման մեթոդաբանության կազմման ուղղությամբ: Միայն 2011-ին աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության ներքո գործող Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ինստիտուտը 30 նոր զբաղմունքների բնութագրեր է մշակել:

Բարեփոխումների շրջանակում ՄԿՈՒ համար մշակվել են 100 պետական կրթական չափորոշիչներ և համապատասխան ուսումնական ու մոդուլային ծրագրեր: Նշվածներից 61-ը գրանցվել են ՀՀ արդարադատության նախարարությունում, ստանալով ազգային ճանաչում, իսկ 39-ը ներկայումս իրականացվում են փորձնական քոլեջներում: Մոդուլները զարգացնում են այնպիսի առանցքային հմտություններ, ինչպիսիք են հաղորդակցությունը, ընդհանուր աշխատանքային ունակությունները, տեղեկատվական տեխնոլոգիաները, անվտանգությունը և առաջնային օգնությունը, երկու օտար լեզուներ, կիրառական տնտեսագիտությունն ու գործարարության մեջ անհրաժեշտ հմտությունները:

Սկզբնական շրջանում փորձառության բացակայության պատճառով ծագած խնդիրների լուծման համար ԿԳՆ-ն և Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը (ՄԿՈՒԶԱԿ) մշակել են նոր չափորոշիչների իրականացման վերահսկման համակարգ: Ծրագրի իրականացման ընթացքում փորձառության բացակայությանը հակազդելու նպատակով վերապատրաստվել են մոտ 4000 դասախոս և վարպետ: ՄԿՈՒ բնագավառների մասնագետների համար մշակվել և տպագրվել են ձեռնարկներ, ուսումնական նյութեր և մոդուլային ծրագրեր: Իրականացվել են նաև հանրային իրազեկման բարձրացմանն ուղղված գործողություններ:

2011-ին ՄԿՈՒ հաստատություններում դասավանդող անձնակազմի 81%-ն ուներ բարձրագույն կրթություն, իսկ գրեթե 1%-ը՝ գիտությունների թեկնածուի կամ ավելի բարձր գիտական աստիճան: Այս բնագավառում աշխատելու շարժառիթները քիչ են, քանի որ աշխատավարձը ազգային միջինից ցածր է: Ուստի միջին ՄԿՈՒ-ն հիմնականում ֆինանսավորվում են ընդունված սովորողներից գանձված

վճարների հաշվին, իսկ քոլեջների տնօրեններն իրավասու են դասախոսների քանակը հարմարեցնելու ընդունված սովորողների թվին: Որոշ դեպքերում սա հանգեցնում է թափանցիկության և որակի բացակայությանը, որից խուսափելու համար ՄԿՈՒ խորհուրդը մշակել է «Դասախոսների և տնօրենների գնահատման և հնարավոր փոխարինման (պարգևատրման), ֆինանսական խրախուսման ուղեցույց»: Այն արժանացել է 12 մարզային պետական քոլեջների խորհուրդների հավանությանը և արդեն իրականացվում է: Այս փորձի արդյունքները կտարածվեն համակարգի մնացած հաստատություններում:

ՄԿՈՒ բարեփոխումների հիմնական ֆինանսավորողը եղել է ԵՄ-ն՝ բյուջեին աջակցության ծրագրի միջոցով, որը սկսվել է 2007-ին և որպես դրամաշնորհ տրամադրել 34,5 միլիոն եվրո: Բարեփոխումների հիմնական նպատակն էր նպաստել իշխանությունների կողմից ՄԿՈՒ համակարգի վարկանիշը բարձրացնելուն և ենթակառուցվածքային փոփոխությունների միջոցով այն ավելի գրավիչ և նկատելի դարձնելուն:

ՄԱԶԾ-ն նույնպես ակտիվորեն մասնակցել է ՄԿՈՒ բարեփոխումներին՝ Դանիայի կառավարության տրամադրած ֆինանսական օժանդակության միջոցով: Այս ծրագրով բարեկարգվել և վերանորոգվել են 12 բազմագործառութային քոլեջներ (մեկական՝ ամեն մարզում և 2-ը Երևանում), որոնք երկրում համակարգի զարգացման համար կդառնան օրինակելի: 2011-ին ընտրված 12 փորձնական քոլեջները վերանվանվել են տարածաշրջանային պետական քոլեջներ և գրանցվել որպես շահույթ չհետապնդող կազմակերպություններ: Նախատեսվում է, որ սրանք կդառնան մարզային նշանակության բիզնես ուղղվածությամբ անկախ ուսումնական հաստատություններ և ուսման որակի ու պայմանների բարելավման շնորհիվ զարգացման մեծ ներուժ կունենան: Տարածաշրջանային պետական քոլեջները պետք է դառնան օրինակելի կենտրոններ, որոնք ստանձնում են ՄԿՈՒ հեղինակության բարձրացման գործը, ինչպես նաև իրականացնում մասնագետների պատրաստմանն ուղղված գործողություններ (իրազեկման բարձրացում, վերապատրաստում, անձնակազմի որակավորման բարձրացում և այլն)՝ ելնելով աշխատաշուկայի պահանջարկից: Այնուամենայնիվ, քոլեջների հաջողությունը մեծապես կախված կլինի երկրի և, մասնավորապես, տվյալ մարզի ընդհանուր տնտեսական զարգացման աստիճանից: Մարդկային ռեսուրսների զարգացման ուղղությամբ ներդրումները կարևոր են, բայց դրանց հաջողությունը կախված է տնտեսական աճն ապահովող ներդրումներից:

Թեև 12 տարածաշրջանային պետական քոլեջներն ունեն պատշաճ ենթակառուցվածք, ներառյալ՝ արհեստանոցները, և օրինակելի կառույցներ են համարվում ժամանակակից ՄԿՈՒ համակարգի համար, այնուամենայնիվ դրանք կազմում են նախնական և միջին ՄԿՈՒ քոլեջների ընդհանուր թվի միայն 12%-ը, որից կարելի է եզրակացնել, որ ռեսուրսների և կառավարման ունակությունների բարելավման նպատակով դեռևս ծավալուն ներդրումների անհրաժեշտություն կա: ՄԿՈՒ այլ հաստատություններում ենթակառուցվածքային ներդրումների սահմանափակությունը շարունակում է իր հետքը թողնել համակարգում ծառայությունների մատուցման որակի վրա: Համակարգի մնացած կառույցներում բարեփոխումների տարածման ռազմավարությունը ձևակերպվել է ՄԿՈՒ բարեփոխումների ծրագրի և գործողությունների պլանի մեջ, որը ներկայացվել է կառավարության հավանությանը: Քանի որ մասնավոր ներդրումները նույնպես շատ կարևոր են, մասնավորապես միջին ՄԿՈՒ-ի համար, կարելի է ասել, որ դրանք, պետական ներդրումների, բարելավված պլանավորման, կառավարման և վերահսկողության հետ մեկտեղ կարող են համակարգն ավելի արդյունավետ և գրավիչ դարձնել:

2011-ին Եվրոպական հանձնաժողովը, ՏՀԶԿ-ն, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը և Եվրոպական կրթական հիմնադրամն իրականացրել են ՓՄԶ զարգացման քաղաքականության գնահատում: Գնահատման համար օգտագործված 10 սկզբունքներից 2-ը ուղղակիորեն վերաբերում են մարդկային ռեսուրսներին և նպատակաուղղված են չափելու, թե ինչպես է համակարգը խթանում գործարար ուսուցումը, նորամուծությունները և հմտությունների բարելավումը: Գնահատումն իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ, Փոքր բիզնեսի ակտի (ՓԲԱ) համակարգողի հսկողության ներքո և հաշվի առնելով Եվրոպական վերապատրաստման հիմնադրամի մեկնաբանությունները: Վերջնական արդյունքները ցույց են տալիս, որ առկա են գործարար ուսուցման մշակույթի խթանման կարևորության վերաբերյալ իրազեկման և ընկալման սահմանափակումներ: Պետական, մասնավոր և ոչ կառավարական ոլորտների միջև ստորագրվել են քաղաքականությանը վերաբերող այնպիսի փաստաթղթեր, ինչպիսին, օրինակ, 2009-ին ստորագրված ՄԿՈՒ ոլորտում

գործակցության փոխըմբռնման հուշագիրն է: Բայց և այնպես, դեռևս չկա գործարար ուսուցման քաղաքականության շրջանակների բացահայտմանն ուղղված համակարգված երկխոսություն, մասնավորապես՝ շարունակական ուսումնառության սկզբունքի համատեքստում:

## 5. ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերջին տարիներին պետբյուջեի ծախսերի հոդվածում ավելացել է կրթությանը հատկացված մասնաբաժինը: 2010-ին կրթությանը հատկացված գումարը կազմում էր ՀՆԱ-ի 3,2%-ը, մինչդեռ 2008-ին այն կազմում էր 2,83%-ը: Չնայած կրթությանն ուղղված բյուջետային հատկացումների աճին՝ կրթության ծախսի հարաբերակցությունը ՀՆԱ-ին դեռևս շատ ցածր է՝ ՏՀԶԿ անդամ-երկրների համեմատ: 2011-ին կրթությանը հատկացված ընդհանուր գումարի (106.085.022 ՀՀ դրամ) միայն 4,8%-ն է տրամադրվել ՄԿՈՒ-ին, մնացած ողջ գումարը հատկացվել է հանրակրթությանը: 2010/2011 ուսումնական տարում ՄԿՈՒ-ում ընդգրկված սովորողների թիվը կազմել է 29.575, որոնց 26,5%-ի համար ուսուցումն անվճար էր, իսկ 73,5%-ը կամ 21.737 սովորողներ վճարում էին իրենց ուսման համար:

Եթե հաշվի առնենք, որ յուրաքանչյուր սովորող տարեկան վճարում է 290 եվրո կամ մոտ 150.000 ՀՀ դրամ, ապա կստանանք, որ սովորողների ընտանիքների կողմից ընդհանուր մուծումը կազմում է 3.260.550 ՀՀ դրամ, որը համարժեք է պետբյուջեի կողմից հատկացված գումարին:

Խորհրդային ժամանակներից ի վեր ինչպես նախնական, այնպես էլ միջին ՄԿՈՒ-ին կարևորություն չէր տրվում, և կրթության համար նախատեսված բյուջետային սահմանափակ միջոցների առյուծի բաժինը հատկացվում էր հանրակրթական հաստատություններին: 1999-ին «Կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, որին հաջորդեցին աշխատաշուկայում քիչ պահանջարկ ունեցող ՄԿՈՒ հաստատությունների թվի նվազեցմանն ուղղված օպտիմալացման ծրագրերը, ՄԿՈՒ համակարգում իրականացվեցին բարեփոխումների մի քանի փուլեր: Սահմանափակ ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման նպատակով նվազեցվում է քոլեջների և նախնական ՄԿՈՒ հաստատությունների թիվը:

Վերջին տարիներին նույնպես, տնտեսական նկատառումներից ելնելով, համակարգի օպտիմալացման հետևանքով քոլեջների թիվը նվազել է 15,7%-ով (2010-ին գործող 101-ի փոխարեն, 2011-ին գործում էր 91 պետական և մասնավոր միջին ՄԿՈՒ հաստատություն): Այսօր գործում են 71 պետական միջին մասնագիտական քոլեջներ, միջին մասնագիտական կրթություն և ուսուցում տրամադրող 5 համալսարաններ և 13 մասնավոր միջին ՄՄՈՒՀ, որոնք, այնուամենայնիվ, պետական դիպլոմ շնորհելու իրավունք չունեն: Այդ իսկ պատճառով էլ վերջին տարիներին դրանց թիվը զգալիորեն նվազել է:

Համակարգի արդյունավետության բարելավման նպատակով 2010-2011թթ. արհեստագործական ուսումնարանների քանակը նվազել է 30-ից մինչև 25-ի: 2011-ին նախնական մասնագիտական կրթություն էին տրամադրում 51 պետական հաստատություններ (25 արհեստագործական ուսումնարան, 20 միջին մասնագիտական հաստատություն, 4 կրթահամալիր, 1 համալսարան և 1 հիմնադրամ):

2011 դեկտեմբերից բոլոր 25 պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) հաստատություններն անցել են ԿԳՆ ենթակայության տակ: Նախնական ՄԿՈՒ այս մակարդակում ծառայությունների մատուցման, առևտրի, սննդի ոլորտների մասնագիտությունները առավել պահանջարկված են: Իգական սեռի ներկայացուցիչները հիմնականում ներգրավվում են այնպիսի դասական ոլորտներում, ինչպիսիք են մանկավարժությունը, առողջապահությունն ու արվեստը:

2011/2012 ուսումնական տարուց սկսած, բոլոր պետական ուսումնական հաստատություններում սովորողների ընդունելությունը տեղի է ունենում ավարտական քննությունների արդյունքների հիման վրա, առանց լրացուցիչ ընդունելության քննության անցկացման, բացառությամբ արվեստի, սպորտի և առողջապահության բնագավառների մասնագիտությունների (ենթադրվում է, որ նույն սկզբունքը կպահպանվի մոտակա մի քանի տարիներին):

ՄԿՈՒ համակարգում գործող հաստատությունների գործունեության գնահատման որևէ մեխանիզմ չկա: 2008-ին հիմնադրված ՈԱԱԿ-ը, որը պատասխանատու է ինչպես բարձրագույն, այնպես էլ մասնագիտական կրթության համար, առաջին քայլերն է կատարել որակի գնահատման չափորոշիչների և չափանիշների սահմանման ուղղությամբ: Կենտրոնն իր գործողությունները կենտրոնացրել է հիմնականում բարձրագույն կրթության բնագավառում (որի համար կազմել է 2011-2015թթ. անցումային շրջանի ռազմավարական ծրագիրը): ՈԱԱԿ-ը որակի հավաստիացման հաստատակարգային գործընթացը բաժանել է երեք փուլերի. (i) ինքնագնահատում, (ii) արտաքին որակավորված մասնագետների կողմից իրականացվող գնահատում և (iii) նախորդ երկուսի համադրման հիման վրա հաշվետվության պատրաստում և տպագրում:

ՄԿՈՒ կառավարման տեղեկատվական համակարգի զարգացումն ու իրականացումը շարունակական գործընթաց է և նպատակաուղղված է տվյալների հավաքագրմանն ու կրթական համակարգում համապատասխան տեղեկատվության ստեղծմանը:

2008-ից սկսած ԿԳՆ ՄԿՈՒ վարչության կազմակերպական կառուցվածքը վերանայվեց և ստեղծվեց ՄԿՈՒ քաղաքականության և ռազմավարության մշակման նոր բաժին: ԿԳՆ կառուցվածքը ներկայացված է Հավելված 1-ում: Բարեփոխումների իրականացումը, որը ներառում էր ուսումնական պլանների վերանայման, ուսումնական նյութերի պատրաստման և համակարգի ներսում դասախոսների ու անձնակազմի վերապատրաստման զգալի առաջադրանքներ, դարձավ կրթության ինստիտուտի կողմից ստեղծված ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնի պարտականությունը:

2008-ին ստեղծվեց ՄԿՈՒ զարգացման ազգային խորհուրդը (ՄԿՈՒԶԱԽ)՝ որպես եռակողմ խորհրդատվական մարմին, որը ներառում է երեք կողմերը (պետություն, գործատուներ, արհմիություններ) ներկայացնող հավասար թվով ներկայացուցիչներ (յոթ հոգի), և որը երաշխավորում է ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործակցության իրականացումը ազգային մակարդակով: ՄԿՈՒԶԱԽ-ի երեք կողմերը կանոնավոր հանդիպումներ են ունենում, որոնց հիմնական նպատակներն են՝ (i) խրախուսել ՄԿՈՒ համակարգի բարեփոխումների իրականացումը և օժանդակել ՄԿՈՒ բնագավառի հետագա զարգացմանը, (ii) ԿԳՆ-ին տրամադրել մասնագիտական կրթության ու ուսուցման քաղաքականությանն ուղղված զարգացման ծրագրերի նախագծման և իրականացման վերաբերյալ խորհրդատվություն: Վերջերս ՄԿՈՒԶԱԽ-ը որոշում կայացրեց վերափոխել գոյություն ունեցող 13 ոլորտային հանձնաժողովները և դրանք դարձնել թվով 15: Ոլորտային հանձնաժողովների հիմնական գործառույթն է ՄԿՈՒԶԱԽ-ի մշակած կրթական չափորոշիչների և ուսումնական պլանների վերանայումը:

2005-ին ընդունված օրենքի համաձայն, ստեղծվեցին քոլեջների կառավարման խորհուրդներ (դրանց ստեղծումն ուղեկցվեց ներկայացուցչականության վերաբերյալ երկարատև վիճաբանություններով և տևեց 3 տարի), որոնց նպատակն է ՄԿՈՒ արդյունավետության բարձրացումն ու դրա համապատասխանեցումը մարզային և տեղական կարիքներին: Օրենքի համաձայն, կառավարման խորհուրդը կազմվում է հինգ տարի ժամանակահատվածի համար և ներառում է ներկայացուցիչներ մանկավարժական կազմից, սովորողներից, հիմնադիրներից և կրթության պետական կառավարման մարմնից: Կառավարման խորհուրդն իրավասու է ընտրելու տնօրենին, հաստատելու բյուջեն, ռազմավարական ծրագրերը, ուսման վարձի չափը և այլն:

Սկսած 2011-ից, տարածաշրջանային քոլեջների կառավարման խորհուրդներում անդամակցության շրջանակն ընդլայնվել է՝ ներգրավելով սոցիալական գործընկերների և զբաղվածության մարզային ծառայությունների նոր ներկայացուցիչներ: Փոփոխություններ են իրականացվել նաև ՄԿՈՒ բոլոր հաստատությունների կառավարման խորհուրդներում՝ ներգրավվել են լրացուցիչ ներկայացուցիչներ սոցիալական գործընկերներից, տեղական իշխանություններից, ՀԿ-ներից և զբաղվածության մարզային ծառայություններից՝ միջհամայնքային գործակցությունը և համայնքային կարիքներին կրթության համապատասխանեցումը խթանելու նպատակով

2009-ին նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական համագործակցության գաղափարն արժանացավ կառավարության հավանությանը, և նույն տարվա ընթացքում դրա հիման վրա ստորագրվեց ՄԿՈՒ ոլորտում

փոխըմբռնման և համագործակցության հուշագիր ԿԳՆ և սոցիալական գործընկերների միջև: Հուշագրի նպատակն է բարելավել ՄԿՈՒ-ի՝ որպես գործատուի պահանջները բավարարող որակյալ աշխատուժ տրամադրող ժամանակակից կառույցի, հետագա զարգացմանն ուղղված օժանդակությունն ու համագործակցությունը:

2011-ին ընդունվեց ռազմավարություն, որի համաձայն բոլոր նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վարչական կառավարումը փոխանցվեց ԿԳՆ-ին: Դրա արդյունքում 2012-ին գյուղատնտեսության նախարարության յոթ, ինչպես նաև մշակույթի և էներգետիկայի նախարարությունների մեկական քոլեջները տեղափոխվեցին ԿԳՆ իրավասության ներքո, իսկ 2013թ. դրանց կմիանան նաև առողջապահության նախարարության 11 քոլեջները:

Ինչպես նշված է տարբեր ռազմավարական փաստաթղթերում, կառավարությունը կարևորում է ՄԿՈՒ համակարգի բարեփոխումները, սակայն այդ ուղղությամբ ֆինանսական լուրջ ներդրումներ չի կատարում: Մոտակա ժամանակահատվածում ԵՄ բյուջետային ֆինանսավորման շրջանակում օժանդակություն է ակնկալվում ՄԿՈՒ բարեփոխումների գնահատման իրականացման համար: Վերջինիս նպատակն է բացահայտել ուղղություններ, որտեղ հետագա ֆինանսական ներդրումների (կառավարական կամ դոնորական) կենտրոնացումը կընդգծի ՄԿՈՒ համակարգի վրա ունեցած ազդեցությունը:

**Օգտագործված գրականություն**


- Վիճակագրական տվյալներ ոչ պաշտոնական տնտեսության մեջ զբաղվածության վերաբերյալ, ԱՄԿ-ի վիճակագրության վարչություն, 2011թ. հունիս
- Հայաստանում ՄԿՈՒ առաջընթացի գնահատում, Թուրինի զեկույց, 2010, Միլենա Կորադինի
- Հայաստանի ՄԿՈՒ Տեխնիկական Աջակցության ծրագիր, եռամսյակային հաշվետվություն, 2-րդ եռամսյակ, 2012
- Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2011 http://www.armstat.am/file/doc/99466623.pdf
- Եվրոստատ. Եվրոպական հարևանության քաղաքականության երկրներ. Ժողովրդագրություն, 2011, ec.europa.eu/eurostat
- Համաշխարհային բանկ - Հայաստան գործընկերություն, Ազգային ծրագրի համառոտ բնութագիր, ապրիլ, 2012
- Համաշխարհային բանկ (http://data.worldbank.org/indicator/NV.AGR.TOTL.ZS և ազգային զեկույց «ՄԿՈՒ-ի կողմից ապահովվող կարողությունների համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին», ԵԿՀ 2011
- Փաստացի գործազրկության մակարդակը Հայաստանում: Տնային տնտեսությունների հետազոտության վերլուծություն, 2010
- Սոցիալական պատկերը և աղքատությունը, ԱՎԾ 2011
- Կրթության, աղքատության և տնտեսական ակտիվության հետազոտություն, ՄԱԶԾ 2002
- Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) շրջանակի կիրառումը Հայաստանում. ինչպես հասնել գերակա ՀԶՆ 1-ին (2.A), Երևան 2012
- Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք. Ազգային ինդիկատիվ ծրագիր. 2007-2010
- ՀՀ կառավարություն. Հայաստանի Ցկյանս ուսումնառության հայեցակարգը, 2009
- «Հմտությունների և միգրացիայի» վերաբերյալ ԵԿՀ ուսումնասիրություն, նախագիծ, օգոստոս, 2012
- «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 2005
- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության միջազգային բյուրո (2011). Կրթության վերաբերյալ համաշխարհային տվյալներ. Հայաստան VII հրատարակություն: 2010/11. Ժնև ՅՈՒՆԵՍԿՕ ԿՄԲ
- ՀՀ կառավարություն. ՀՀ-ում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգ, 2009

- ՀՀ կառավարություն. ՀՀ կրթության և ուսուցման ռազմավարությունը, 2011-2015
- Կրթության, աղքատության և տնտեսական ակտիվության հետազոտություն, ՄԱԶԾ, 2002
- ՀՀ կառավարություն. Կայուն զարգացման ծրագիր (հայտնի է որպես ԱՀՌԾ -2)
- Տնտեսության արժեքների հետազոտական կենտրոն (Համաշխարհային տնտեսական ֆորումի գլոբալ մրցունակության ցանց) - Ազգային մրցունակության զեկույց, 2009, Հայաստան
- «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն. 2011թ.-ի տարեկան հաշվետվություն

Հավելված I ԿԳՆ կազմակերպական կառուցվածքը



Հավելված II Կրթական համակարգը Հայաստանում



Հավելված III Կառավարման ձևաթուղթ

| | Լիազորություն | Իրավասություն | Ռեսուրսներ | Հաշվետվողականություն |
|---|---|---|---|---|
| **Գործառույթները ՄԿՈՒ համակարգի ներսում** | Ովքե՞ր են օրինական կարգով այս գործառույթներն իրականացնում: Արդյո՞ք դերերը[1] և պարտականությունները համարժեքորեն սահմանված են: | Արդյո՞ք իրականացնողներն ունեն համապատասխան տեխնիկական իրավասություն կամ ի՞նչ է անհրաժեշտ այս գործառույթն իրականացնելու համար: | Արդյո՞ք իրականացնողներն ունեն համարժեք ֆինանսական և մարդկային ռեսուրսներ կամ ի՞նչ է անհրաժեշտ այս գործառույթն իրականացնելու համար: | Ինչպե՞ս են իրականացնողները հաշվետու դառնում կատարված աշխատանքի համար |
| **Քաղաքականություն և օրենսդրություն** | | | | |
| ՄԿՈՒ և զբաղվածության ազգային քաղաքականության սահմանում | Նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին ՄԿՈՒ-ի և շարունակական կրթության համար պատասխանատու է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (ԿԳՆ): ՄԿՈՒ մեթոդաբանական աջակցության մարմինը ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնն է (ՄԿՈՒԶԱԿ), որը գտնվում է ԿԳՆ ենթակայության տակ:<br><br>ԿԳՆ-ին խորհրդատվություն տրամադրելու, ՄԿՈՒ ոլորտի զարգացման ծրագրերի նախապատրաստմանը նպաստելու, ոլորտում բարեփոխումների արդյունավետությունը բարձրացնելու և սոցիալական գործընկերության հետագա | Իրականացնողներն ունեն համարժեք իրավասություններ, բայց անհրաժեշտ է իրականացնել ավելի արդյունավետ բարեփոխումներ և մշակել ավելի արդյունավետ քաղաքականություն: | Մարդկային ռեսուրսները համարժեք են, բայց ֆինանսական ռեսուրսները բավարար չեն: | ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնը հաշվետու է մեթոդաբանական բարեփոխումների համար (չափորոշիչների, մոդուլային ուսումնական ծրագրերի մշակում, ուսուցիչների վերապատրաստում և այլն): Տարեկան երկու անգամ ՄԿՈՒԶԱԿ-ը հաշվետվություն է ներկայացնում ԿԳՆ-ին, իսկ յուրաքանչյուր տարվա վերջին հաշվետվություն է ներկայացնում Ազգային խորհրդին:<br>ԿԳՆ-ն հաշվետու է կառավարությանը և հաշվետվություններ է ներկայացնում վերջինիս:<br>Գործում է ներգերատեսչական և միջնախարարական հաշվետվողականության համակարգը: |

[1] Իրականացնողները կարող են ունենալ որոշումներ ընդունելու, խորհրդատվական և գործադիր դերակատարություն:

| | | | | |
|---|---|---|---|---|
| | զարգացման համար ձևավորվել է ՄԿՈՒ զարգացման ազգային խորհուրդ:<br><br>Նախարարություններ: Բայց սրանք աստիճանաբար կփոխանցվեն ԿԳՆ-ի վարչական լիազորության շրջանակ:<br><br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ) պատասխանատու է զբաղվածության քաղաքականության համար: ԱՍՀՆ-ն ունի առանձին ստորաբաժանում՝ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը: Գործակալության խնդիրը զբաղվածության կարգավորման պետական քաղաքականություն իրականացնելն է: | | | |
| Ազգային ՄԿՈՒ-ի և զբաղվածության քաղաքականության մշտադիտարկում | Նախարարություններ (հիմնականում ԿԳՆ և ԱՍՀՆ), ՄԿՈՒ ազգային կենտրոն, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն | Մշտադիտարկման իրականացման համար նախարարությունները բավարար իրավասություններ չունեն:<br><br>Հաջողված նախագծերի շրջանակում գործակցելու համար զարգացնել բարի համբավ: Կարողունակությունն ու կայունությունը բարձրացնելու համար | Մարդկային ռեսուրսները բավարար են, բայց այդ ռեսուրսների արդյունավետ օգտագործումը խնդրահարույց է: Անհրաժեշտ է ապահովել աշխատակազմերի ավելի լավ ուսուցում: Ֆինանսական ռեսուրսները բավարար չեն: | Գործում է ներգերատեսչական և միջնախարարական հաշվետվողականության համակարգը: Նախարարությունները հաշվետու են կառավարությանը և հաշվետվություններ են ներկայացնում վերջինիս: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | գործընկերության մեջ մտնել համանման կազմակերպությունների հետ: | | |
| ՄԿՈՒ օրենսդրություն (թե նախնական և թե շարունակական) | ԿԳՆ | Իրավասությունները բավարար են: | Ֆինանսական և մարդկային ռեսուրսները բավարար են: | ԿԳՆ-ն հաշվետու է կառավարությանը և հաշվետվություններ է ներկայացնում վերջինիս: Գործում է նաև ներգերատեսչական և միջնախարարական հաշվետվողականության համակարգը:<br>ՄԿՈՒ օրենսդրությունը և նոր բարեփոխումները քննարկվում են ՄԿՈՒ զարգացման ազգային խորհրդի ժողովների ժամանակ: |
| **Որակավորում և ուսումնական պլաններ** | | | | |
| Հմտությունների կամ ուսուցման կարիքների ազգային, ոլորտային կամ մարզային մասշտաբի վերլուծություններ | ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն | Տեխնիկական իրավասությունների բացակայություն | Մարդկային ռեսուրսները բավարար են: Ֆինանսական ռեսուրսները բավարար չեն: | ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնը հաշվետու է ԿԳՆ-ին: |
| Զբաղմունքների ցանկի նախատեսում | ԱՍՀՆ (Ազգային ինստիտուտ), ԿԳՆ (ՄԿՈՒԶ ազգային կենտրոն) | Տեխնիկական իրավասությունները բավարար են: | Ռեսուրսները բավարար չեն | ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնը հաշվետու է ԿԳՆ-ին: |
| Չափորոշիչների/ որակավորումների սահմանում և վերանայում | ԿԳՆ, ՄԿՈՒԶ ազգային կենտրոն<br><br>Համապատասխան նախարարությունները, սոցիալական գործընկերության և ՄԿՈՒ հաստատությունները մասնակցում են չափորոշիչների մշակմանը: | Տեխնիկական իրավասությունները բավարար են: | Ռեսուրսները բավարար են | ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնը հաշվետու է ԿԳՆ-ին: Գործում է ներգերատեսչական և միջնախարարական հաշվետվողականության համակարգը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ուսումնական պլանների (ամեն տեսակի) մշակում կամ վերանայում | ԿԳՆ, ՄԿՈՒՀ ազգային կենտրոն, ՄԿՈՒ հաստատություններ | Տեխնիկական իրավասությունները բավարար են: | Ռեսուրսները բավարար են | ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնը հաշվետու է ԿԳՆ-ին: Գործում է ներգերատեսչական և միջնախարարական հաշվետվողականության համակարգը: |
| **Ուսուցիչներ և ուսուցանողներ** | | | | |
| ՄԿՈՒ դասավադողների նախնական ուսուցում և հավաքագրում | ԿԳՆ-Կրթության ազգային կենտրոն, ՄԿՈՒՀ ազգային կենտրոն<br>Դոնորներ | Տեխնիկական իրավասությունները բավարար են: | Մարդկային ռեսուրսները բավարար են: Ֆինանսական ռեսուրսները բավարար չեն: | Կրթության ազգային ինստիտուտը, ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնը հաշվետու են ԿԳՆ-ին: |
| Ուսուցիչների համալրում | ՄԿՈՒ հաստատություններն ինքներն են հավաքագրում ուսուցիչներին | Տեխնիկական իրավասությունները բավարար են: | Ռեսուրսները բավարար չեն: | Հաշվետվողականությունն իրականացվում է ներգերատեսչական հաշվետվությունների միջոցով: |
| ՄԿՈՒ ուսուցիչների ընթացիկ վերապատրաստում | ԿԳՆ-Կրթության ազգային կենտրոն, ՄԿՈՒՀ ազգային կենտրոն<br>Դոնորներ | Տեխնիկական իրավասությունները բավարար են: | Ռեսուրսները բավարար չեն: | Հաշվետվողականությունն իրականացվում է ներգերատեսչական հաշվետվությունների միջոցով: |
| Ուսուցիչների գնահատում և կարիերայի զարգացում | ՄԿՈՒ հաստատություններ | Տեխնիկական իրավասությունները բավարար են: | Ռեսուրսները բավարար չեն: | Հաշվետվողականությունն իրականացվում է ներգերատեսչական հաշվետվությունների միջոցով: |
| **ՄԿՈՒ ապահովողները** | | | | |
| - նախնական ՄԿՈՒ և<br>- շարունակական ՄԿՈՒ ապահովողների ցանց | Վերոնշյալ նախարարությունները, Կրթության ազգային ինստիտուտ, ՄԿՈՒՀ ազգային կենտրոն | Տեխնիկական իրավասությունները բավարար են: | Մարդկային ռեսուրսները բավարար են: Ֆինանսական ռեսուրսները բավարար չեն: | Գործում է ներգերատեսչական և միջնախարարական հաշվետվողականության համակարգը: |
| ՄԿՈՒ ծրագրերի և սովորողների թվաքանակի պլանավորում | ԿԳՆ,առողջապահության նախարարություն, մշակույթի նախարարություն, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն՝ ՀՀ կառավարության հետ | Տեխնիկական իրավասությունները բավարար չեն: | Մարդկային ռեսուրսները բավարար են, բայց բացակայում են տվյալների բազան և կարողությունները: Ֆինանսական | Գործում է ներգերատեսչական և միջնախարարական հաշվետվողականության համակարգը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համաձայնեցնելով, ՄԿՈՒ հաստատություններ՝ ԿԳՆ-ի հետ համաձայնեցնելով: | | ռեսուրսները բավարար չեն: | |
| Միջին մասնագիտական հաստատությունների բյուջեի պլանավորում | ԿԳՆ, ֆինանսների նախարարություն | Տեխնիկական իրավասությունները բավարար չեն: | Մարդկային ռեսուրսները բավարար են, բայց բացակայում են տվյալների բազան և կարողությունները: Ֆինանսական ռեսուրսները բավարար չեն: | Գործում է ներգերատեսչական և միջնախարարական հաշվետվողականության համակարգը: |
| Գործ են ունենում ուսումնական հաստատությունների ծախսերի հետ (կառավարում են հաստատությունների բյուջեները) | ՄԿՈՒ հաստատություններ, ՄԿՈՒ հաստատությունների կառավարման մարմիններ | Տեխնիկական իրավասությունները բավարար չեն: | Ֆինանսական ռեսուրսները բավարար չեն: | Յուրաքանչյուր տարի տնօրենները հաշվետու են կառավարման մարմիններին: Որոշ ՄԿՈՒ հաստատություններ 3 տարին մեկ մշակում են բիզնես պլան: |
| **Ուսումնական նյութեր և սարքավորումներ** | | | | |
| Ուսումնական նյութեր | ԿԳՆ, Կրթության ազգային ինստիտուտ, ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն | Տեխնիկական իրավասությունները բավարար են: | Ֆինանսական ռեսուրսները բավարար չեն: | Հաշվետվողականությունն իրականացվում է ներգերատեսչական հաշվետվությունների միջոցով: |
| Աշխատաժողովների համար նախատեսված սարքավորումներ | Կառավարություն, դոնորներ | Տեխնիկական իրավասությունները բավարար չեն: | Ռեսուրսները բավարար չեն: | Հաշվետվողականությունն իրականացվում է ներգերատեսչական հաշվետվությունների միջոցով: |
| **Գործնական ուսումնառության վայրեր** | | | | |
| Կապ գործատուների հետ | ԿԳՆ, ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն, ՄԿՈՒ հաստատություններ, ԱՍՀՆ/«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն | Տեխնիկական իրավասությունները բավարար են: | Այս ռեսուրսների արդյունավետ օգտագործումը խնդրահարույց է: Անհրաժեշտ է վերլուծության ենթարկել աշխատաշուկայի պահանջարկը և ամրապնդել | Հաշվետվողականությունն իրականացվում է ներգերատեսչական հաշվետվությունների միջոցով: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | գործակցությունը գործատուների և ՄԿՈՒ հաստատությունների միջև: | |
| Գործնական ուսուցման տեղամասեր ընկերություններում | ՄԿՈՒ հաստատություններ | Տեխնիկական իրավասությունները բավարար չեն: | Ռեսուրսների բացակայություն: Բազմաթիվ ընկերություններ չեն վստահում ՄԿՈՒ սովորողներին: | Հաշվետվողականությունն իրականացվում է ՄԿՈՒ հաստատությունների միջոցով |
| Աշկերտություն | ՄԿՈՒ հաստատություններ | Տեխնիկական իրավասությունները բավարար չեն: | Ռեսուրսների բացակայություն: Աշխատաժողովների, լաբորատորիաների, վերապատրաստված ուսուցիչների բացակայություն | Հաշվետվողականությունն իրականացվում է ՄԿՈՒ հաստատությունների միջոցով |
| **Գնահատում և հավաստագրում** | | | | |
| Սովորողների հմտությունների գնահատում | ՄԿՈՒ հաստատություններ | Տեխնիկական իրավասությունները բավարար են: | Ռեսուրսները բավարար են: | Հաշվետվողականությունն իրականացվում է ՄԿՈՒ հաստատությունների միջոցով |
| Հավաստագրերի հանձնում | ԿԳՆ | Տեխնիկական իրավասությունները բավարար են: | Ռեսուրսները բավարար են: | Հաշվետվողականությունն իրականացվում է ներգերատեսչական հաշվետվությունների միջոցով: |
| **Մշտադիտարկում և ազդեցություն** | | | | |
| ՄԿՈՒ-ի ապահովման որակի մշտադիտարկում | ԿԳՆ, ՄԿՈՒՀ ազգային կենտրոն, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ) | Տեխնիկական իրավասությունները բավարար չեն: | Ռեսուրսները բավարար են: Բացակայում է տվյալների բազան: | Հաշվետվողականությունն իրականացվում է ներգերատեսչական հաշվետվությունների միջոցով: |
| Շրջանավարտների՝ ուսումնական հաստատությունից աշխատանքի անցման հետազոտություններ կամ հետամուտ ուսումնասիրություններ | Չեն անցկացվել: | Տեխնիկական իրավասությունները բավարար չեն: | Ռեսուրսների բացակայություն | Հաշվետվողականություն չկա: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Հետազոտություն և նորարարություն** | | | | |
| Հետազոտություն և նորարարություն, ներառյալ՝ նորարարությունները փորձնականից համակարգային մակարդակ տեղափոխելը | ԿԳՆ, դոնորներ | Տեխնիկական իրավասությունները բավարար չեն: | Ռեսուրսների բացակայություն | Հաշվետվողականությունն իրականացվում է ներգերատեսչական հաշվետվությունների միջոցով: |
| **Դոնորների համակարգում** | | | | |
| ՄԿՈՒ համակարգի դոնորների արդյունավետ համակարգում | ԿԳՆ | Տեխնիկական իրավասությունները բավարար են: | Ռեսուրսները բավարար են: | Հաշվետվողականությունն իրականացվում է ներգերատեսչական հաշվետվությունների միջոցով: |